ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ԽԱՉԱՏՐՅԱՆ Հ. Գ.

Արիստոտելը նշում էր, որ պետական կառույցը կխարխլվի, եթե այնտեղ ըստ էության ուշադրություն չի դարձվում երիտասարդու-թյան դաստիարակությանը, քանի որ հենց որոշակի բնույթի կրթությունն ու դաստիարակությունն են այն արմատական գործոնները, որոնց շնորհիվ պետությունը կարող է դառնալ կամ ժողովրդավարական, եթե դրանց բնույթն այդպիսին է, կամ օլիգարխիկ (քչերի տիրապետությամբ), եթե նշվածների բնույթն ուղղորդում է դրան[1]:

Անդրադառնալով կրթության անտիկ իդեալի (պայադեյա) գաղա-փարին՝ Ի. Կանտը շեշտադրել է կրթության՝ որպես երկու եզրերի համադրման ֆենոմենով օժտված լինելը, այսինքն՝ անհատական եզակին և համընդհանուր հասարակականը նրա պատկերացմամբ կրթության միջոցով են ձևավորվում ու միասնականացված ընկնում մարդ քաղաքացու սոցիալ-քաղաքական ազատության և զարգացման հիմքում[2]:

Արդի աշխարհում հասարակության սոցիալական ոլորտը վճռական դեր ունի ազգային պետությունների քաղաքական արդիականացման գործընթացում և համահարաբերակցելով հասարակության մյուս ոլորտների հետ՝ «ակնկալում է» դրանց բարերար ազդեցությունը, հատկապես քաղաքական առումով: Ի վերջո, այսօր սոցիալական քաղաքականությունը քաղաքականի և սոցիալականի փոխհարաբերության համակարգայնացումն է սոցիալական շահերի հարաբերականորեն ներդաշնակման առումով: Դրա իրականացման գործոնները բավական են, և դրանից, հատկապես, ապագայի տեսանկյունից գերակշռողը կրթությունն է: Դրանով իսկ շեշտադրվում է ազգային դպրոցի՝ որպես սոցիալ-էթնիկական միջավայրի կա- րևորությունը էթնոհանրույթի ժողովրդավարական համախմբման գործընթացում: Այս հետազոտությունը գիտագործնական նշանակություն ունի էթնոֆորի սոցիալականացման հիմնախնդրի լուծման հարցում, որն էլ փաստարկվում է ստորև:

Հերբերտ Հայմենը 1959 թ. օգտագործեց «քաղաքական սոցիա-լականացում» տերմինը, ընդ որում, այդ անվանումը ի հայտ եկավ հիմնականում անհատի քաղաքական վարքագծի հոգեբանական ոլորտում նրա անցկացրած հետազոտությունների արդյունքների հիման վրա: Նա ուշադրություն դարձրեց այնպիսի գործընթացի վրա, որում ծնվում են անհատի քաղաքական համոզմունքները, ընդ որում, իր նման անհատների հետ համատեղ գործունեություն ծավալելու դեպքում, գործընթաց, որն իր ժամանակին Իստոնը անվանել էր «քաղաքականացում»: Այդ կերպ նա միջառարկայական նոր կապի հիմքը դրեց, որը քաղաքական և հոգեբանական տեսությունների սահմանակցման եզրն էր ակնհայտ դարձնում:

---

[1] *Տե՛ս* **Аристотель.** *Соч., в 4 т., т. 4, М., 1983, с. 628.*

[2] *Տե՛ս* **Кант И.** *Соч., в 8 т., т. 8, М., 1994, с. 112.*

Էթնոհանրույթի քաղաքական սոցիալականացումը մենք նկատի ենք ունեցել ոչ միայն այսպես կոչված «երկառարկայական», այլ բազմառարկայական կապի տեսանկյունից: Սա նոր բնույթի խորհրդածություն է էթնոֆորի քաղաքական սոցիալականացման կամ էթնոհանրույթի ժողովրդավարական համախմբման գործընթացի մասին, որն էլ կրթության բովանդակության բացահայտման գիտական նախորդ պարադիգմների բացառումն է ի հայտ բերում: Բացի այդ, դիտարկվող հիմնախնդրի արդիականության հավաստիությունը, ինչպես նաև ուսումնասիրության աստիճանի հարաբերականորեն բացակայության իրողությունն է շեշտադրվում կրթության արդիական հիմնախնդիրներին քաջատեղյակ Կ. Թորեսի դատողություններով, որոնք փաստում են այս հետազոտության ուղղվածությամբ գիտատեսական բնույթի աշխատանքների բացակայության մասին[3]: Հեղինակը նշում է նաև այդ բնույթի ուսումնասիրության դերն ու նշանակությունը էթնոֆորի արդիականորեն քաղաքականացման գործում: Խոսքն Անտոնիո Գրամշիի այն թեզի մասին է, որի առիթով ոչ միայն արդիական լինելու փաստն է արձանագրվում, այլև նման բնույթի ուսումնասիրության բացակայությունը: Գրամշիի տեսական մակարդակի կանխադրույթի համաձայն՝ պետությունը, որպես «էթնիկական պետություն» կամ դաստիարակ, ստանձնելու է նոր կրթական քաղաքակրթություն կառուցելու գործառույթը[4]:

Թեև նա շեշտադրում է Ա. Գրամշիի այդ կանխադրույթի կարևորությունը, այնուամենայնիվ, դրան չի անդրադառնում, քանզի այդ ուղղվածությամբ հիմնախնդիրը նրա հետազոտության տեսադաշտից դուրս է եղել:

Այդ կանխադրույթի փակագծերի բացումն ու դրա սոցիալ-էթնիկական իմաստով առաջնորդվելը կարևոր նշանակություն կունենան էթնոհանրույթի ժողովրդավարական համախմբման գործընթացում, հատկապես քաղաքական արդիականացման առումով:

Հայտնի է, որ ընդհանուր սոցիալականացման (նաև քաղաքական) ինստիտուտներն են ընտանիքը, դպրոցը, աշխատանքային կոլեկտիվները, սոցիալական հաղորդակցության միջոցները, եկեղեցին, կուսակցությունները և այլն, որոնցից հարաբերականորեն առանձնացրել ենք ազգային դպրոցն իր մանկավարժական, սոցիալ-հոգեբանական և էթնոգենոմշակութային միջավայրի առումով: Նման բազմաբնույթ ուղղվածություններով դրսևորվող ֆենոմենի դեպքում ընդհանուր սոցիալական միջավայրի օպտիմալ ձևավորման նախադրյալները, ըստ տրամաբանության, նույնպես բազմաշերտային են լինելու, և այդ իսկ տեսակետից էլ միջառարկայական բնույթով հետազոտություն կատարելը դառնում է հրամայական: Միևնույն ժամանակ, գիտության մեթոդաբանության պահանջին համա-

---

[3] *Տե՛ս* **Թորես Կ.**, *Ժողովրդավարություն, կրթություն և բազմամշակութայնություն. քաղաքացիության երկընտրանքները գլոբալ աշխարհում, Ե., 2005, էջ 32:*

[4] *Նույն տեղում, էջ 44:*

պատասխան՝ ձգտել ենք կրթության սոցիալ-էթնիկական հիմնախնդիրը, այսինքն՝ անձի քաղաքական սոցիալականացումը դիտել որպես հարաբերականորեն «ինքնավար ֆենոմեն», իսկ այդ գործընթացը՝ օպտիմալ հունի հանգեցնող իմացական-ճանաչողական (կոգնիտիվ) նախապայման:

Իր ժամանակին Գ. Պլեխանովը նկատել է, որ չկա ոչ մի պատմական փաստ, որին նախորդած չլինի գիտակցության որոշակի վիճակ: Դա հատկապես կարևոր է դիտարկել պատմական հեռանկարի տեսանկյունից ազգային-քաղաքական, իրավական ու բարոյական կերպափոխման առումով[5]: Ուրեմն կրթական արժեքի ու իմաստայնության նշանակությունը ապագա քաղաքացուն այնպիսի տեսական գիտելիքներով զինելն է, որոնց շնորհիվ ազգը կարող է ժամանակին ձերբազատվել քաղաքական այնպիսի գործընթացներից, և որոնք իրենց բախումնային ուղղվածությամբ բզկտում են նրա ոգին: Պատահական չէ, որ գիտելիքի և կրթության փոխհարաբերակցության հիմնախնդրի գիտակներ Բերգերն ու Լուկմանը, կարևորելով օպտիմալ սոցիալ-քաղաքական իրողություն կերտելու հիմնահարցը, նշել են դրանց բացառիկ ազդեցությունն ապագա քաղաքացիական հասարակություն կառուցելու գործընթացի վրա:

«Գիտելիքը հասարակության մասին ունի երկու իմաստ՝ ա) սոցիալական իրողության՝ որպես օբյեկտիվ իրականության ճանաչում և բ) որպես այդ իրականության անընդհատ ստեղծագործություն»[6]:

Արևմուտքի գիտամանկավարժական միտքն ու բարոյաքաղաքական կեցվածքը, XX դ. 50-ական թթ. սկսած, կարևորեցին ժողովրդավարական արժեքներին համապատասխան՝ էթնոհանրույթի ազգային-քաղաքական կերպարի ձևավորման գործում քաղաքական ուղղվածությամբ (և ոչ թե կրթության քաղաքականացմամբ. դրանք տարբեր բաներ են) կրթություն կազմակերպելու նշանակությունը[7]: «Ժողովրդավարական համակարգի ձևավորումն ազգային դպրոցի առաքելության ու քաղաքական սկզբունքի հարց է: Ապագա քաղաքացին, դպրոցում ծանոթանալով քաղաքականության բովանդակության հիմնախնդիրներին, ազգային քաղաքական ու պետական մտածելակերպի (Staatsbewußtsein) սուբյեկտի կարող է վերածվել»[8]:

Այս հիմնախնդրի դիտարկման շրջանակում տրամաբանորեն ներառվում են ազգային ինքնագիտակցության և էթնոնույնականացման գործընթացը մի կողմից, իսկ մյուս կողմից՝ քաղաքական արդիականացումը: Դրանք մեր հետազոտության տեսանկյունից դիտարկվել են որպես էթնիկ մշակույթի արմատների հիման վրա քա-

---

[5] *Տե՛ս* **Плеханов Г.** *О материалистическом понимании истории (Избранные философские произведения, М., 1956, т. 2, с. 247-248).*

[6] **Бергер П., Лукман Т.** *Социальное конструирование реальности: трактат по социологии знания, М., 1995, с. 111.*

[7] *Տե՛ս* **Manfred N., Bernard S.** *u. a. Politische Bildung in der Demokratie, Melle, 1990.*

[8] *Նույն տեղում, էջ 19:*

ղաքական էթնոֆորի[9] (ազգային-քաղաքական գիտակցությունը կրողի) ձևավորման և սոցիոգեն արդիական քաղաքական արժեքի (համաշխարհայնացման) ֆենոմեններ: Սրանք էլ կարող են ապահովել էթնոհանրույթի ժողովրդավարական համախմբումը, քանի որ դրանցից որևէ մեկի անտեսումը բացառում է արդիականացվող ազգային պետության կերտումը: Այս հիմնախնդրի լուծումը հետազոտությունում առաջարկվում է հետևյալ կերպ. ազգային էլիտար մշակույթը՝ ազգային փիլիսոփայությունը, արվեստը, գիտությունը, որպես արժեքներ, իրենց առկայությամբ փաստում են միայն ազգային ոգու խորության այս կամ այն աստիճանը: Դրան զանգվածային բնույթ հաղորդելու անհրաժեշտությունը ենթադրում է, որ ազգային-մշակութային իր որոշակի մակարդակով այն տեղափոխվելու է ընդհանրության դաշտ, այսինքն՝ դառնալու է ժողովրդի սեփականությունն ու ձևավորելու է էթնոֆորի գիտակցությունը: Հարկ է նշել, որ այսօր պատշաճ ուշադրության է արժանանալու տեսական մակարդակի հետևյալ դրույթը. «Հանրակրթության էական բարեփոխումը և առաջանցիկ զարգացումը դառնում են անհրաժեշտ ու անխուսափելի: Պետության և ազգային անվտանգության ապահովման ու հզորացման գործում գերակա խնդիր է դառնում պետական մտածելակերպ ունեցող և ապագայի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ մարդու ձևավորումը»[10]: Տրամաբանական է, որ վերը նշված գաղափարներին հասնելու առանցքային օղակը կրթությունն է, որը և կվերածվի արդեն ազգային կրթության փիլիսոփայության հիմնական հասկացությունների իրականացման նախապայմանի: Գերմանացի հետազոտող Կուրտ Լենկն իր «Քաղաքական տեսության մեթոդաբանական հարցերը» հոդվածում նշում է, որ պրակտիկ փիլիսոփայության արմատական հասկացություններն (die Schlüselbegriffe) են «կարգ ու կանոնը», «փոխհամաձայնությունը» և «լավ կյանքը»: Այդ իսկ առումով էլ մարդ քաղաքացու և մարդ քաղաքական գործչի համար կարևոր են այն գիտելիքները, որոնք, որպես արժեքներ, սերմանվելով նրանց մեջ, առանցքային պայմաններ (Rahmenbedingungen) կստեղծեն էթնոհանրույթի սոցիալ-քաղաքական կառույցի խելամիտ համակարգի ձևավորման համար[11]: Վերջինս դիտարկվող հայեցակետից կարելի է որակավորել որպես էթնիկական պահանջմունք, որի գաղափարի տարածումը երիտասարդության շրջանում կարող է կատարվել համապատասխան էթնիկական-մանկավարժական միջավայրի ստեղծմամբ և դրա միջոցով:

Այն, կարող է գոյավորվել միայն «Կրթություն–էթնոգենոտիպ–սոցիալ-մշակութային արժեքներ» եռամիասնական ֆենոմենով, որն էլ կապահովի

---

[9] *Այս տերմինի բովանդակային վերլուծությունը տե՛ս* **Խաչատրյան Հ.,** *Ազգային կրթության դերը քաղաքական էթնոֆորի ձևավորման հիմնախնդրում, Ե., 2008:*

[10] *Հանրակրթության պետական կրթակարգ: Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ, Ե., 2004, էջ 7:*

[11] *Տե՛ս* **Kurt L.** *Methodenfragen der politischen Theorie (Politische Theorien von der Antike bis zur Gegenwart. Bundeszentrale für politische Bildung, Bonn, 1991, S. 1000).*

էթնոհանրույթի ժողովրդավարական համախմբման գործընթացը, հատկապես էթնոգենոմշակութային ներուժի հայեցակետից: Այդ իսկ տրամաբանությամբ էլ մենք առաջարկում ենք հետևյալը. այսօր մեր կրթական քաղաքականությունը հենվելու է ոչ միայն փիլիսոփայական, մանկավարժական ու քաղաքական սկզբունքների վրա, այլև էթնոգենոմշակութային ներուժ հանդիսացող գործոնի վրա՝ շեշտադրելով եվրոպական քաղաքական գենոտիպին բնորոշ արժեքներով քաղաքացիական հասարակություն կառուցելու հնարավորությունը հայոց էթնոսի համար: Այդ գաղափարն արծարծվելու է պետական ուսումնական ծրագրերում, որպեսզի սովորողը ուսումնառության տարիներին կողմնորոշվի եվրոպական և հայկական մշակույթների համադրելիության պայմաններում և ապագա գործունեությամբ հանդես գա արդեն ազգային քաղաքական էթնոֆոր: Փաստորեն, քաղաքական կյանքի առօրեական (սուբստանցիոնալ) մակարդակից ճանաչողական դաշտ դուրս գալու նախապայմանը էթնոմշակութային միջավայրում ձևավորված և հարուստ էթնոմշակութային ներաշխարհի տեր անհատների առկայությունն է:

Ամերիկյան քաղաքագետ Ֆայները 1956 թ. հրատարակված «Եվրոպական մեծ պետությունների կառավարման համակարգերը» աշխատությունում փորձեց հիմնավորել էթնոմշակութային գործոնի ազդեցությունը քաղաքական գործընթացի վրա: Մենք այս հիմնախնդրին ու դրա լուծմանը մոտեցել ենք միանգամայն այլ հայեցակետից. կրթությունը դիտարկել (իսկ իրականում այդպես էլ է, և սոսկ կիրառման հիմնահարցն է մեջտեղ գալիս) որպես էթնոհանրույթն արդիականորեն քաղաքականացնող ֆենոմեն:

Նման տրամաբանության հիման վրա տեսանելի է դառնում նորութային հետևյալ մտահանգումը. «Էթնոգենոտիպ–կրթություն–սոցիալ-մշակութային արժեքներ» եռամիասնությամբ է ապահովվում անհատի և ամբողջ հասարակության օպտիմալ քաղաքական սոցիալականացումը: Փաստորեն, պետականի և էթնիկականի օպտիմալ փոխհարաբերության նախադրյալները ձևավորվում են էթնոմշակութային-մանկավարժական միջավայրում, որտեղ ուսուցման օբյեկտի հոգեբանության մեջ սերմանվում է այն, որ այդպիսի փոխհարաբերությունը արիստոտելյան դատողությամբ երբեք չի կարող բխել հանուն «համատեղորեն» գոյակցելու գաղափարից, այլ կարող է դրսևորվել գեղեցիկ ու նպատակաուղղված գործունեությամբ[12]:

Ըստ վերը նշված բնույթի՝ կրթության կազմակերպումն ինքնին և՛ քաղաքական ցանկալի գործընթացի նախապայման է, և՛ տվյալ սոցիալական ժամանակահատվածի քաղաքական գործընթացի վրա բարերար ազդեցություն ունեցող ֆենոմենի կարող է վերածվել: Դա էլ ենթադրում է էթնոքաղաքական կրթության բովանդակությունն իր երեք փոխկապակցված, բայց միևնույն ժամանակ շարժընթացայինով (դինամիկայով) պայմանավորված հիմնական բաղադրատարրերը. ա) էթնոքաղա-

---

[12] *Տե՛ս* **Аристотель,** *Политика, М., 2005, с. 108.*

քական գիտակցություն → (բ) էթնոքաղաքական սոցիալականացում → (գ) էթնոքաղաքական մշակույթի գործընթացային գոյավորում: Դրանց կիրառելիության արդյունքը էթնոֆոր-պետության բազմաբնույթ փոխհարաբերությունների կանոնավորման ակնկալիքն է: Այսպիսի եզրահանգման համար հիմք են ծառայել նաև գիտական լուրջ ուսումնասիրությունները ժամանակակից, ասենք քաղաքական սոցիալականացմանն ուղղված (այդ նույնը կարելի է վերագրել մյուս երկու բաղադրատարրերի գոյավորման գործընթացին) ուսումնառության ոլորտում: Այսպես, համաձայն Ռոբերտ Սիգելի, Ջեյմս Նաթանի և ուրիշ հեղինակների՝ «քաղաքական սոցիալականացում» կատեգորիան իր բովանդակությամբ առնչվում է ուսուցմանը[13]:

Եվ պատահական էլ չէ, որ XIX դ. երկրորդ կեսին և XX դ. ողջ ընթացքում գիտամանկավարժական հայեցակարգերի բովանդակությունն աչքի էր ընկնում հարաբերականորեն միասնականացված գաղափարով. ազգի մտավոր զարգացումն ու անհատի քաղաքական ակտիվությունը, որոնք կարող էին իրականացվել կրթության միջոցով (Դյուրկհեյմ, Ուորդ Լեստեր, Մարքս, Դյուի, Մանհեյմ, Օրտեգա-ի-Գասետ, Հորկհայմեր, Ադորնո, Բերգեր, Լուկման և այլք), ծառայեցնել էթնոհանրույթի ժողովրդավարական համախմբման գործընթացին: Դրանով իսկ կրթությունը հայտարարվում էր էթնոմշակութայինի և քաղաքականի՝ որպես էթնոհանրույթի ու պետության մերձեցման ֆենոմենների միջև կապող օղակ, որն էլ Դյուին բնորոշում է որպես ժողովրդական հասարակության ստեղծման օբյեկտիվ նախադրյալ: Փաստորեն, դա այնպիսի սոցիալական կյանքի հաստատման նախապայման է դառնում, «...որտեղ շահերը միահյուսվում ու փոխներթափանցվում են, որտեղ առաջընթացն ու վերակառուցումը հանդես են գալիս որպես կարևոր գործոններ...»[14] էթնոհանրույթի քաղաքական մշակույթի ձևավորման համար:

Ընդհանրացնելով արդի փուլում մանկավարժության, փիլիսոփայության, հոգեբանության, քաղաքագիտության և կրթության սոցիոլոգիայի բնագավառներում մեր ուսումնասիրությունները՝ եկել ենք հետևյալ եզրակացության, որը միևնույն ժամանակ առաջարկություն է այսօրվա ազգային կրթության փիլիսոփայության համար. կրթությունը կազմակերպվելու է նրա էթնոքաղաքական բովանդակության վերը նշված երեք բաղադրատարրերի նշանակությունից ելնելով, այսինքն՝ ուսումնական ծրագրային մակարդակի է բարձրացվելու էթնոգենոմշակութային արժեքների գործառույթը՝ ապ գա քաղաքացիներին արդարության, ազատության, հայրենասիրության, բարոյականության, հանդուրժողականության և համանման քաղաքական արժեքների համեմատ: Էթնոքաղաքական կրթությանը ներհատուկ ազգային-սոցիալական ուղղվածությունը հաջորդ քաղաքական սերնդին կոգնիտիվային մակարդակի հասցնելուն պետք է ծառայեցվի: Դպրոցահասակ և

---

[13] *Տե՛ս ըստ* **Սանֆրեդ Ն.** *Կրթության իրավունքները (Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ, Ե., 2009, էջ 353):*

[14] **Дюи Д.** *Демократия и образование, М., 2000, с. 85.*

ուսանողական տարիքային առանձնահատկությունը՝ ռացիոնալիստականի (Պիաժե, Կոլբերգ, Ադելսոն) ձգտելով հանդերձ, կարելի է ենթադրել, որ քաղաքականության մասին հետագա պատկերացումների նախատիպայինը ձևավորվում է առանձնապես 7-11, 11-18 ու 18-25 տարեկանների շրջանում: Դրա իրականացմանը նպաստում է էթնոգենոմշակութային-մանկավարժական համապատասխան միջավայրը. փաստորեն, աշակերտի և ուսանողի ուսումնառությունը քաղաքական գիտակցության, քաղաքական սոցիալականացման և քաղաքական մշակույթի նախնական փուլով գոյավորվելու մի անփոխարինելի ժամանակահատված է:

«Էթնոմշակութային միջավայր–կրթություն» համակարգի բաղադրատարրը միայն միկրոմակարդակի մանկավարժական շերտը չէ, այն ներառում է քաղաքական մակրոմակարդակը, այսինքն՝ հարցադրմանը՝ «արդյո՞ք իսկական մանկավարժն է դաստիարակում» և «արդյո՞ք քաղաքական խոհեմությամբ է առաջնորդվում ազգը» հարցադրումների դրական պատասխանով են պայմանավորված էթնոնույնականացումն ու դրա հիման վրա քաղաքական էթնոֆորի ձևավորումը: «Ոչ մի կրթական համակարգ,- գրում է Կ. Մանհեյմը,- ի վիճակի չէ նոր սերնդի մեջ պահպանելու էմոցիոնալ կայունություն և հոգևոր ամբողջականություն (ընդգծումը մերն է – Խ. Հ.), քանի դեռ գոյություն չունի ընդհանուր ռազմավարությունը՝ կապված սոցիալական այն ինստիտուտների հետ, որոնք գործունեություն են ծավալում դպրոցից դուրս»[15]:

Արդի սոցիալ-քաղաքական համակարգի արդիականացման կատեգորիկ իմպերատիվը վաղվա իր էթնիկական ապագայի մասին մտահոգվող պետություններին կողմնորոշում է դեպի կրթական գործառույթի սոցիալ-մշակութային արժևորումը, որի արդյունքը մարդ քաղաքացու ձևավորումն է և դրա հիման վրա առանձին անհատի և ամբողջ հասարակության միջև քաղաքական մշակույթի բովանդակությամբ ներդաշնակվող հարաբերությունների ստեղծումը:

ФИЛОСОФИЯ НАЦИОНАЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ В УСЛОВИЯХ СОЦИАЛЬНО-ПОЛИТИЧЕСКОЙ МОДЕРНИЗАЦИИ

ХАЧАТРЯН Г. Г.

Резюме

Социально-политическая модернизация предполагает формирование прототипа политического сознания и этнического самосознания. В этой связи весьма существенна роль национального образования как важнейшего фактора в вопросе национальной идентичности. При этом национальная школа должна всячески способствовать демократической консолидации этнической общности.

[15] **Манхейм К.** *Диагноз нашего времени, М., 1994, с. 480.*